ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՍՊ-ՊԸԾՁԲ-17/05» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի բացման նիստի
(Հայտերի վերագնահատման մասին)

ք. Երևան *24.02.2017թ.*
Ժամը՝ 16:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ս. Պռազյան*

Անդամներ՝ *Գ. Ղազարյան*

Լ. Մովսեսյան

Ա. Սեդրակյան

Ս. Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Թ. Միրզախանյան*

1. **«ՍՊ-ՊԸԾՁԲ-17/05»** ծածկագրով մրցույթի հայտերի վերագնահատման մասին.

1.1. Գնային առաջարկներ պարունակող հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում՝ http://www.armeps.am/ կայքով, 2017 թվականի փետրվարի 16-ին, ժամը 11:00-ին: http://www.armeps.am/ կայքի միջոցով ներկայացված մասնակցի հայտում առկա փաստաթղթերի անհամապատասխանությունների պատճառով՝ հիմք ընդունելով հրավերի 7.1.5 կետի դրույթները անհրաժեշտություն է առաջացել հետաձգել հայտերի գնահատման արդյունքների գնահատման և հրապարակման նիստը և հրավիրել հայտերի վերագնահատման նիստ և ժամանակ տալ մասնակցին շտկելու անհամապատասխանությունները (բացառությամբ գնային առաջարկի և հայտի ապահովման): 23.02.2017 թվականի հայտերի բացման նիստը կասեցվել է 1 աշխատանքային օրով՝ ժամանակ տրամադրելով մասնակցին շտկելու անհամապատասխանությունները :

Կասեցված հայտերի վերագնահատման բացման նիստը տեղի է ունեցել 2017 թվականի փետրվարի 24-ին ժամը 16.00-ին ք. Երևան Աբովյան 9 հասցեում :

1.2. Գնային առաջարկներ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը

1	«Մալետա» ՍՊԸ	էլ. հասցե maletagnum@gmail.com
2	«Լիգա պլյուս» ՍՊԸ	էլ. հասցե ligaliga13@mail.ru

1.3. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

1.3.1. «Մալետա» ՍՊԸ-ի և «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի կողմից պահպանված է հայտերի կազմման և ներկայացման ընթացակարգը՝ հայտերը ներկայացվել է //www.armeps.am/ համակարգով:

1.4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ հրավերի հավելվածները լրացված և էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված մասնակիցների կողմից առկա են:

1.5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1.5.1 «Լիգա պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասղան.

1.5.2 «ՄԱԼԵՏԱ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում՝ N N 1,2,3.2,3.3,3.5,3.6 հավելվածներում առկա են «ՄԱԼԵՏԱ» ՍՊԸ-ի անվան նշման անհամապատասխանություններ, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: 2017թվականի փետրվարի 23-ի հանձնաժողովի N 3 որոշմամբ կասեցվել է հայտերի բացման վերագնահատման նիստը և նույն օրը ծանուցվել է մասնակցին՝ 1 աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունը, սահմանված ժամկետում «ՄԱԼԵՏԱ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանատվությունը:

«Մալետա» ՍՊԸ-ի հայտը ենթակա է վերագնահատման և մերժման՝ հիմք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ և 46-րդ կետեր, ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի 25-րդ կետ, Հրավերի I մասի 7.1.5, 7.2.1 կետեր, Հրավերի II մասի 2.2, 2.2.1, 2.2.3, 2.2.4, 2.2.4, 2.2.6 կետեր:

1.6. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և նախահաշվային գինը:

1.7 Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Հ/Բ	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին	Գնի առաջարկները (ՀՀ դրամով առանց ԱԱՀ)	Շահույթ	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը	Մասնակցի անունը
1	«ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» մրցույթի անցկացման	4960800	4415110	220750	-	4635860(չորս միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր վաթսուն)	«Մալետա» ՍՊԸ
1	«ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» մրցույթի անցկացման	4960800	4405500	489500	-	4895000(չորս միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար)	«Լիգա պլյուս» ՍՊԸ

Հանձնաժողովը 5 կողմ , 0 դեմ ձայնով, միաձայն որոշեց

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կարիքների համար «ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՊ-ՊԸԾՁԲ-17/05» ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում՝

«Մալետա» ՍՊԸ –ի հայտը վերագնահատել անբավարար և մերժել:

«Լիգա պլյուս» ՍՊԸ-ի հայտը վերագնահատել բավարար և ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից թիվ 1 չափաբաժնով:

1.8 Հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման և հրապարակման նիստը նշանակել 2017 թվականի փետրվարի 28-ին, ժամը 11:00-ին:

1.9 Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Ս. Պռազյան*

Անդամներ՝ ---------- *Գ. Ղազարյան*

---------- *Լ. Մովսեսյան*

---------- *Ա. Սեդրակյան*

---------- *Ս. Աբրահամյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- *Թ. Միրզախանյան*